600.0236.08.07.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

8 հուլիսի 2020 թվականի №236Ա
քաղ. Երևան

«ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը և 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության 2020-2022 թվականների ներդրումային ծրագրին՝ համաձայն №№1-6 հավելվածների:
2. Ընդունել ի գիտություն, որ «Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության 2020-2022 թվականների ներդրումային ծրագիրը կազմում է 4 455,3 մլն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի՝ հետևյալ հիմնական ուղղություններով.
    1) պատվարների և դրանց հիմնատակերի լրացուցիչ երկրաֆիզիկական ուսումնասիրությունների, ամրապնդման և մշտադիտարկման ժամանակակից համակարգերի ներդրման նախագծային փաստաթղթերի կազմում՝ 564,9 մլն դրամ.
    2) «Տաթև ՀԷԿ»-ի օրական կարգավորման ջրավազանի (ՕԿՋ) վերականգնման նախագծային փաստաթղթերի կազմում՝ 43,4 մլն դրամ.
    3) շրջակա միջավայրի պահպանության, աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության ոլորտի գործառույթների բարելավում՝ 1 849,5 մլն դրամ.

4) «Տաթև ՀԷԿ»-ում երեք բանվորական անիվների փոխարինում՝ 665,5 մլն դրամ.

5) հիդրոէլեկտրակայաններում լրացուցիչ պաշտպանության սարքերի տեղադրում՝ 200,9 մլն դրամ.

6) հիդրոէլեկտրակայանների շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 1 131,2 մլն դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
COMMISSION TO REGULATE PUBLIC SERVICES OF THE RA
02531594

ք. Երևան
8 հուլիսի 2020թ.